



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/120-2025
ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-
ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ
(ԿՄ 38+450 ԿՄ 90+191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ,
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ
ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
15 օգոստոսի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ (խորհրդի նախագահ) Տ. Խաչատրյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Շրջակա միջավայրի նախարար Հ. Մաթևոսյան
 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի Ք. Ղալեչյան
 տեղակալ

Արդարադատության նախարարի տեղակալ Գ. Քոչարյան

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Է. Զաքարյան

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Ա. Գուգարաց

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական Ա. Հայրապետյան

Ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության Ս. Շահնազարյան
 վարչության պետ

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա Հ. Մկրտչյան
 ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
 ժամանակավոր պաշտոնակատար

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի Ա. Բաբայան
 իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր
 պաշտոնակատար

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար- Ա. Չերչինյան
 րության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
 գործադիր տնօրեն

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ա. Սանոյան
 ծրագրի Տրանշ-4-ի Սիսիան-Քաջարանի հյուսիսային հատվածի
 կառուցման ծրագրի ղեկավար

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար- Հ. Օրդուխանյան
 րության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
 գնումների բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ «Դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման» ծրագրի շրջանակներում Սիսիան-Քաջարան ճանապարհի Հյուսիսային հատվածի (27 կմ) շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ:

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին:

Օրակարգային 2-րդ հարց՝ Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ ճանապարհահատվածի Հարավային հատվածի (շուրջ 24 կմ) շինարարական աշխատանքների Ինժեների (տեխնիկական հսկիչի) խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ:

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին:

Արձանագրվեց հետևյալ պայմանավորվածությունը, որ Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյանի առաջարկությամբ հրատապության կարգով կվերանայվի ՇՄԱԳ-ի ընթացակարգերի և ժամկետների սահմանումը՝ տարանջատելով դեպքերը և, ըստ այդմ, առաջիկայում կներկայացվի օրենքի համապատասխան փոփոխության նախագիծ:

Օրակարգային 3-րդ հարց՝ Տրանշ 4-ի «Սիսիան-Քաջարան Հարավային հատված» ներդրումային ծրագրի գնումների պլանի վերաբերյալ:

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին:

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից հանձնարարվեց՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ վերանայել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրերը տրանշներով համարակալելու տարբերակը՝ այն ներկայացնելով համապատասխան հատվածների անվանումներով:

Օրակարգային 4-րդ հարց՝ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների վերաբերյալ:

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին:

Օրակարգային 5-րդ հարց՝ «Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ ճանապարհահատվածի» Հարավային հատվածի (շուրջ 24 կմ) շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ:

Զեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Որոշվեց՝ հավանություն տալ հարցին:

Հավելյալ հարց՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի ծրագրի կառավարման խորհրդատուի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման միջազգային բաց մրցույթի շրջանակներում Հետաքրքրվածության հայտերի ներկայացման վերջնաժամկետի երկարաձգման վերաբերյալ:

Ձեկուցողներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյան և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ Հասմիկ Օրդուխանյան:

Ներկայացվեց հետևյալ էական դիտարկումը՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը, անդրադառնալով մրցույթային գործընթացներում մասնակցության խնդիրներին, տեղեկացրեց, որ հետազոտությունների արդյունքում հայտնաբերել է միջազգային կոմպետենտ և մրցունակ հարթակ՝ մրցույթային հայտարարությունների տեղադրման համար, որտեղ գործում է պայմանական բաժանորդագրային վճար և որը հնարավորություն է ընձեռում մրցույթային գործընթացներում ներգրավել նոր մասնակիցների:

Որոշվեց՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգել 30 օրով:

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից հանձնարարվեց՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի Ծրագրի Կառավարման խորհրդատուի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման միջազգային բաց մրցույթի առաջին փուլում, մասնակիցների անբավարար քանակով մասնակցության դեպքում, չգնալ փոխզիջման ճանապարհով, այլ վերահայտարարել մրցույթը՝ մեկ անգամ ևս տեղեկացնելով պոտենցիալ մասնակիցներին ծրագրի կարևորության և ծավալի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ